

ՔԱՂՎԱԾՔ

«Մարդու իրավունքների Եվրոպական
Կոնվենցիայի համապատասխանության
խթանունը Հայաստանում» թեմայով
ուսուցում Հայաստանի մարզերի համար

ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրն իրականացվել է «Իրավական Ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից
Հայաստանում Բրիտանական Դեսպանատան
աջակցությամբ

ՔԱՂՎԱԾՔ

«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխանության խթանումը Հայաստանում» թեմայով ուսուցում Հայաստանի մարզերի համար

ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխանեցման խթանումը Հայաստանում. ուսուցում մարզերի համար» ծրագրի հաշվետվության սույն քաղվածքը (այսուհետ «Ծրագրի հաշվետվություն») ներառում է տեղեկություններ ծրագրային միջոցառումների մասին, որոնք իրականացվել են «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխանեցման խթանումը Հայաստանում. ուսուցում մարզերի համար» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ «Ծրագիր»), որն իրականացվել է 2004 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2005թ. հունվարի 30-ը **«Իրավական Ուղեցույց»** հասարակական կազմակերպության կողմից (այսուհետ «Իրավական ուղեցույց»)՝ Հայաստանում Բրիտանական դեսպանատան ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի շրջանակը

Ծրագիրը հիմնականում կենտրոնացվել է Երևանից դուրս՝ Վանաձոր և Գավառ քաղաքներում, և նպատակ է ունեցել Հայաստանի Հանրապետությունում խթանել իրավունքի գերակայությունը՝ նպաստելով ներպետական մակարդակում, մասնավորապես Հայաստանի մարզերում, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ «ՄԻԵԿ») նորմերի կիրառելիությանը՝ փաստաբանների, դասախոսների ինչպես նաև իրավաբանի մասնագիտություն ունեցող այլ անձանց, ներառյալ ուսանողների և հանրակրթական դպրոցներում մարդու իրավունքներ դասավանդող ուսուցիչների ուսուցման միջոցով:

Ծրագրի իրականացման համար հիմք հանդիսացավ Բրիտանական Արևելք-Արևմուտք կազմակերպության (այսուհետ՝ «ԲԱԱԿ») կողմից 2002-2004թթ.-ին կազմակերպված և իրականացված «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխանության ապահովումը Հայաստանում, Վրաստանում և Ադրբեյջանում» թեմայով ուսուցանողների վերապատրաստում ծրագիրը (այսուհետ՝ «Ուսուցանողների վերապատրաստում ծրագիր»): «Ուսուցանողների վերապատրաստում ծրագրի ընթացքում 2 ավագ ուսուցանողներ Հայաստանից՝ Նարինե Գասպարյանը և Արայիկ Ղազարյանը 2002 թ-ի գարնանը վերապատրաստվել են ԲԱԱԿ-ի մասնագետների կողմից: 2002 թ-ի հունիսից դեկտեմբեր ամիսների ընթացքում ավագ ուսուցանողները Հայաստանում անցկացրել են 2 երկարաժամկետ թրեյնինգներ երիտասարդ իրավաբանների, փաստաբանների և իրավաբանական ֆակուլտետի ուսանողների համար: Հայաստանում անցկացված նշված ուսուցման արդյունքում

ընդհանուր հաշվով վերապատրաստվել են 80 երիտասարդ իրավաբաններ, փաստաբաններ և իրավաբանական ֆակուլտետի ուսանողներ:

Հաշվի առնելով այն փաստը, որ Ուսուցանողների վերապատրաստում ծրագրի առանձնահատկությունները և ֆորմատը անհնարին են դարձնում նմանատիպ ուսուցումների իրականացումը Հայաստանի մարզերում, ավագ ուսուցանողները Հայաստանում Բրիտանական դեսպանատան ֆինանսական աջակցությամբ 2004 թ-ի սեպտեմբերի 1-ից մինչև 2005 թ-ի հունվարի 30-ը Հայաստանի 2 մարզերում կազմակերպեցին և իրականացրեցին մի շարք փորձնական սեմինարներ, որի իրականացման ծրագրային հաշվետվության քաղվածքը ներկայացված է սույն փաստաթղթում:

Իրականացման Պլան

Ծրագիրը կազմվել և իրականացվել է 2004 թ-ի սեպտեմբերի 1-ից մինչև 2005 թ-ի հունվարի 30-ը: Այն իրականացվել է Հայաստանում Բրիտանական դեսպանատան կողմից հաստատված ծրագրի աշխատանքային պլանին համապատասխան:

Ծրագրի Իրականացման Խումբը

Ծրագիրն իրականացվել է հետևյալ աշխատակիցների կողմից՝

1. Նարինե Գասպարյան՝ ՄԻԵԿ-ի հարցերով մասնագիտացած իրավաբան/ավագ ուսուցանող, Ծրագրի ղեկավար,
2. Արա Ղազարյան՝ ՄԻԵԿ-ի հարցերով մասնագիտացած իրավաբան/ավագ ուսուցանող,
3. Արման Ալոյան՝ ներպետական օրենսդրության փորձագետ, ավագ ուսուցանող,
4. Արսեն Ապրոյան՝ ուսուցանող-օգնական Գավառում, Գավառի պետական համալսարանի իրավունքի դասախոս, 2003 թ-ի օգոստոսին ԲԱԱԿ-ի շրջանակներում Հայաստանից ավագ և աջակցող ուսուցանողների կողմից իրականացված ՄԻԵԿ-ի սեմինարների մասնակից,
5. Էդմոն Մարուխյան՝ Վանաձորում գործող «Մեդիա Գրուպ» հասարակական կազմակերպության Իրավական բաժնի տնօրեն, 2003 թ-ի օգոստոսին ԲԱԱԿ-ի շրջանակներում Հայաստանից ավագ և աջակցող ուսուցանողների կողմից իրականացված ՄԻԵԿ-ի սեմինարների մասնակից:

Ուսուցման մեթոդոլոգիան և ֆորմատը

Ուսուցման ֆորմատը և մեթոդոլոգիան մանրամասնորեն ընտրվել են ավագ ուսուցանողների կողմից՝ հաշվի առնելով Հայաստանի

Հանրապետության մարզերի կարիքները և թեմաների առանձնահատկությունները:

Վանաձոր քաղաքում անցկացված ուսուցումը նվիրված է եղել ՄԻԵԿ-ի հետևյալ հոդվածներին.

1. Արտահայտվելու ազատություն, 10-րդ հոդված,
2. Հավաքների և միավորման ազատություն, 11-րդ հոդված,
3. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք, 5-րդ հոդված,
4. Արդար դատաքննության իրավունք, 6-րդ հոդված:

Գավառ քաղաքում անցկացված ուսուցումը նվիրված է եղել ՄԻԵԿ-ի հետևյալ հոդվածներին.

1. Արտահայտվելու ազատություն, 10-րդ հոդված,
2. Հավաքների և միավորման ազատություն, 11-րդ հոդված
3. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք, 5-րդ հոդված
4. Ստքի, խղճի և կրոնի ազատություն, 9-րդ հոդված:

Ուսուցման առաջին և երրորդ օրերի ընթացքում ներկայացվել են ՄԻԵԿ-ի ընտրված հոդվածների էությանը վերաբերող դրույթները, ինչպես նաև Կոնվենցիայի հիմնական սկզբունքները և Եվրոպական Դատարանի կանոններն և գործունեության առանձնահատկությունները:

Ուսուցման երկրորդ և չորրորդ օրերին պրակտիկ վարժություններ և գործի ուսումնասիրություններ են իրականացվել: Սա հնարավորություն է տվել արդյունավետ կերպով կիրառել ձեռք բերված տեսական գիտելիքները: Ուսուցումն իրականացվել է տարբեր ինտերակտիվ մեթոդների կիրառման միջոցով, ինչպիսիք են քննարկումները, հարց և պատասխանը, վարժությունները, դատախաղերը, դերախաղերը, ինչպես նաև «Power Point» և այլ տիպի ելույթները:

Ծրագրի ձեռքբերումները

Վանաձորում և Գավառում Ծրագրի իրականացման արդյունքում իրականացվել են հետևյալ նպատակները՝

§ 42 իրավաբաններ մարզերից, մասնավորապես Վանաձոր և Գավառ քաղաքներից, որոնց թվում են երիտասարդ իրավաբաններ, փաստաբաններ, իրավաբան գիտնականներ և իրավաբանական ֆակուլտետի առաջատար ուսանողներ, վերապատրաստվել են ՄԻԵԿ-ի ընտրված հոդվածների ուղղությամբ: Մասնակիցները ձեռք են բերել տեսական գիտելիքներ և ՄԻԵԿ-ի դրույթների կիրառման փորձ՝ իրական գործերի հիման վրա մշակված դատախաղներ իրականացնելու արդյունքում: Մասնակիցներին ուսուցանվել է նաև ներպետական մարմիններում, ներառյալ դատարաններում, ՄԻԵԿ-ի նորմերի կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանի Սահմանադրական դատարանի համապատասխան

որոշման և ներպետական դատական գործերի վերլուծություն կատարելու արդյունքում վեր են հանվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ՄԻԵԿ-ի համապատասխանեցման հարցերը:

- § Դասընթացների ժամանակ Ուսուցման մասնակիցներին հնարավորություն է ընձեռնվել ծանոթանալ ինտերնետի միջոցով իրավական ոլորտում հետազոտություններ կատարելու առանձնահատկություններին, մասնավորապես Եվրոպական Դատարանի վճիռների և որոշումների, ինչպես նաև ռուսերեն լեզվով առկա այլ համապատասխան նյութերի և փաստաթղթերի որոնման տեխնիկային:
- § ՄԻԵԿ-ի նորմերի կիրառմանը նպաստել է նաև հանրակրթական դպրոցներում, համալսարաններում, հասարակական կազմակերպություններում և այլ վարչական մարմիններում դրանց անմիջական օգտագործման արդյունքում: Վանաձորում անցկացված Ուսուցման մասնակիցները իրենց ամենօրյա աշխատանքների ընթացքում օգտագործում են Ուսուցման արդյունքում ձեռք բերված գիտելիքները, ինֆորմացիան և զանազան նյութեր: *(Ձեռք բերված արդյունքների մասին մանրամասն տեղեկություններ իմանալու համար տե՛ս սույն հաշվետվության «Ուսուցման արդյունավետության և օգտակարության գնահատումը» մասը):*
- § Կապ է հաստատվել Երևանի, Վանաձորի և Գավառի իրավաբանների և փաստաբանների միջև, ինչը նպաստում է ՄԻԵԿ-ի վերաբերյալ տեղեկությունների ուղղակի և արդյունավետ փոխանցմանն ու փորձի փոխանակմանը: Այդ նպատակով «Իրավական Ուղեցույցը» ստեղծվել է տվյալների բազա, որի նպատակն է տարածել ՄԻԵԿ-ի վերաբերյալ տեղեկություններ և կապ հաստատել իրավաբանների միջև:
- § Վանաձոր և Գավառ քաղաքներից իրավաբաններ են ընդգրկվել ՄԻԵԿ-ի հարցերով զբաղվող իրավաբանների թիմ, որը հնարավորություն կտա տեղեկություններ և փորձ փոխանակել բրիտանացի մասնագետների և Երևանի ՄԻԵԿ-ի հարցերով մասնագիտացած իրավաբանների հետ: Վանաձոր և Գավառ քաղաքներում վերապատրաստված իրավաբաններն այժմ համագործակցում են ավագ ուսուցանողների հետ, որի արդյունքում ավագ ուսուցանողներին տեղեկություններ են տրամադրվում հավանական դիմումատուների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատներ են ներկայացվում:
- § Ուսուցմանը մասնակցած իրավունքի դասախոսները իրենց դասախոսությունների ժամանակ արդեն իսկ օգտագործում են ուսուցման ժամանակ ձեռք բերված նյութերը, այդպիսով ունենալով ավելի մեծ լսարան՝ ՄԻԵԿ-ի վերաբերյալ ձեռք բերված տեղեկություններն ու գիտելիքը փոխանցելով ավելի շատ մարդկանց: Համաձայն Վանաձորում վերապատրաստված

անձանց կողմից տրամադրած տվյալների՝ ուսուցմանը Վանաձորից մասնակցած 4 միջնակարգ դպրոցների ուսուցիչներ կիրառել և ներկայումս կիրառում են իրենց ձեռք բերված գիտելիքները և նյութերը, այդ թվում նաև դատախազերը, միջնակարգ դպրոցներում անցկացվող Մարդու իրավունքների դասերի ժամանակ:

§ Ուսուցմանը մասնակցած փաստաբանները ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, նյութերը և տեղեկությունները օգտագործում են իրենց ամենօրյա գործունեության ընթացքում՝ այսպիսով խթանելով ՄԻԵԿ-ի համապատասխանեցումը ներպետական դատարաններում արդարադատություն իրականացնելիս:

§ Ծրագրի իրականացման ընթացքում «Իրավական Ուղեցույցը» կապեր հաստատեց Վանաձորում գտնվող «Մեդիա Գրուպ» հասարակական կազմակերպության, ինչպես նաև Գավառում գործող Գավառի Զարգացման Կենտրոնի և Գավառի պետական համալսարանի Իրավաբանական Կլինիկայի հետ: «Իրավական Ուղեցույցը» կշարունակի աշխատել նշված կազմակերպությունների հետ, մարզերում իրավունքի գերակայության և ՄԻԵԿ-ի նորմերի կիրառումը խթանելու նպատակով:

Ուսուցման արդյունավետության և օգտակարության գնահատումը

Հսկումն ու գնահատումը ցանկացած ուսուցման արդյունավետության և հաջողության գնահատման բաղադրիչներից են: «Իրավական Ուղեցույցը» մշակել է գնահատման և հսկման մի շարք մեթոդներ, որոնք ներառում են.

ա) Ուսուցման մասնակիցների գիտելիքի գնահատման ձևերի մշակում և կիրառում, որոնք նախատեսված են որոշել վերապատրաստվողների գիտելիքների աճը:

Գավառում իրականացված ուսուցման մասնակիցների գիտելիքների ստուգման ձևերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնակիցները **57 %-ով** բարելավել են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Եվրոպական կոնվենցիայի նորմերի և չափանիշների համապատասխանության վերաբերյալ իրենց ունեցած գիտելիքները և նրանց սպասելիքները լիովին բավարարվել են:

Վանաձորում իրականացված ուսուցման մասնակիցների գիտելիքների գնահատման ձևերի ուսումնասիրությունները ցույց է տալիս, որ մասնակիցները **55 %-ով** բարելավել են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Եվրոպական կոնվենցիայի նորմերի և չափանիշների հ համապատասխանության վերաբերյալ իրենց ունեցած գիտելիքները, և նրանց սպասելիքները լիովին բավարարվել են:

բ) Հարցաթերթերի մշակում և կիրառում, որոնք նախատեսված են որոշելու ուսուցման արդունավետությունը՝ ծրագրային և կազմակերպական տեսանկյունից: Սա հնարավորություն է տալիս բարելավել Ուսուցման իրականացումը և համապատասխանեցնել այն մասնակիցների կարիքներին:

Վանաձորի և Գավառի մասնակիցների առաջարկները ներառում էին ուսուցման արդյունավետության հետ կապված կարևոր հարցեր: Բոլոր մասնակիցները Ուսուցման ընդհանուր կազմակերպվածությունը գնահատել են «գերազանց»: Վանաձորի և Գավառի ուսուցման բոլոր մասնակիցները հիշատակել են, որ ուսուցումը բարելավել է իրենց մասնագիտական գիտելիքները, և որ իրենց տրամադրած տեղեկությունները, հմտություններն ու նյութերը չափազանց օգտակար էին և արժեքավոր:

գ) Ուսուցման օգտակարության և դրա ընթացքում ստացված գիտելիքների և հմտությունների, ինչպես նաև տրամադրված տեղեկությունների և նյութերի կիրառելիության աստիճանը ստուգելու համար նախատեսված հարցաթերթերի մշակում և կիրառում:

Մշակված հարցաթերթերը տրամադրվել են Վանաձոր քաղաքում անցկացված ուսուցման մասնակիցներին (քանի որ հարցաթերթերը նախատեսված են լրացվել ուսուցումից առնվազն 2 ամիս անց, դրանք լրացվել են միայն Վանաձորում անցկացված Ուսուցման մասնակիցների կողմից: Գավառում իրականացված Ուսուցման մասնակիցները հարցաթերթը կլրացնեն 2005թ-ի մարտին) Ուսուցման ընթացքում ստացված գիտելիքների գործնականում կիրառման և օգտագործման ինչպես նաև նյութերի և փաստաթղթերի մասին համապատասխան տեղեկություններ ստանալու նպատակով: Արդյունքում, ուսուցման բոլոր մասնակիցները հաստատել են, որ իրենց մասնագիտական կարիքները և սպասելիքները արդարացվել են, և 10 մասնակիցներ նշել են, որ գործնականում կիրառել և կիրառում են ուսուցման արդյունքում իրենց ձեռք բերված գիտելիքները, նյութերը և փաստաթղթերը: